ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 հոկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

145
(2995)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ՝ ԿԵՆՏՐՈՆԻ ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն նոր սկանդալ է բացահայտել Կենտրոնի թաղապետարանի աշխատակազմի պաշտոնյաների մասով: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտե օպերատիվ խումբը խմբով կաշառք ստանալու համար Կենտրոնի թաղապետարանի երկու պաշտոնյաների է ձերբակալել: Ձերբակալվածները թաղապետարանի կոմունալ բաժնի աշխատակիցներ են եղել ու խմբով ներգավվել են կաշառքի գործընթացում:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Հակակոռուպցիոն կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվել եւ ինչ նոր բացահայտում է իրականացվել. ի պատասխան՝ լրատվական բաժնից հայտնեցին, որ Կենտրոնի թաղապետարանի երկու պաշտոնյաներ Կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում ունեն մեղադրյալի կարգավիճակ: Նրանք մեղադրվում են խմբով կաշառք ստանալու համար:

Դատելով իրավիճակից՝ «Կենտրոն վարչական շրջանի վրա թաղապետ չի գալիս», քանի որ ով նշանակվում է՝ նրա ղեկավարության ներքո գտնվող շրջանակում կոռուպցիոն գործարքներ են իրականացվում: Հիմա էլ նոր թաղապետ Պետրոս Պետոյանը կհայտնի, թե տեղյակ չի եղել, իսկ իրականում թաղապետերը կամ անգործության են մատնված կամ էլ գուցե լավ տեղյակ են եւ իրենց բաժին շահագրգռվածությունն ունեն կաշառքի գործերում: Օրինակ՝ անցած տարի, երբ Կենտրոնի թաղապետը Սամվել Ղուկասյանն էր, նրա աշխատակիցներն էին կաշառքի գործընթացի մեջ մտել, ու հիմա այդ գործը դատարանում է, իսկ ահա նախկին թաղապետ Ղուկասյանը ոչ միայն պատասխանատվության չենթարկվեց, այլեւ մի բան էլ բարձր պաշտոնի նշանակվեց Երեւանի քաղաքապետարանում: Իսկ հիմա Կենտրոն վարչական շրջանի ղեկավարը Պետրոս Պետոյանն է, եւ նրա աշխատակիցները խմբով կաշառք ստանալու համար ձերբակալվել են ու մեղադրյալի կարգավիճակ ունեն:

Ինչո՞վ է զբաղված թաղապետը, երբ իր ղեկավարած թաղապետարանում խմբով կաշառք ստանալու գործով են մեղադրվում:

ՀՀ ԳԱԱ-ի գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, կրթության ոլորտի փորձագետ Ատոմ Մխիթարյանը օրերս Hark Media TV-ի եթերում հայտարարել էր, որ ՀՀ-ում համատարած անգրագիտություն է տիրում: Վերջինս իր հարցազրույցի ժամանակ ասել է, որ Հայաստանի դպրոցներում մայրենի լեզվի շարադրություններից երեխաների 1/4-ը բացասական գնահատական է ստանում, իսկ մաթեմատիկա առարկայից՝ 2/3-ը: «Հայաստանի կրթությունը համեմատենք տարածաշրջանի երկրների հետ: Անցած տարի հետազոտություն է իրականացվել ռեգիոնի բոլոր երկրներում. նույն տարիքի երեխաների տրվել է մայրենի լեզվից շարադրություն եւ մաթեմատիկայից՝ գրավոր աշխատանք: Հետազոտությունը արվել է Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում, Թուրքիայում եւ Ռուսաստանում: Իմ թվարկած երկրներից որտե՞ղ է ամենավատ իրավիճակը գրանցվել..... Հայաստանո՛ւմ: 3-ից 2-ը ստացել է բացասական գնահատական: Մայրենի լեզվից 4-ից 1-ը ստանում է բացասական գնահատական: Ավելի վախենալու բան ասեմ. այս պահի դրությամբ Հայաստանի դպրոցահասակ երեխաների 10-ից 1-ը, անցած տարվա տվյալներով, ուղղակի դպրոց չի գնում: Այսինքն՝ անգրագիտության մակարդակը համատարած է դարձել Հայաստանում», - ասել է Ատոմ Մխիթարյանը: Կրթության փորձագետը որակել է, որ Հայաստանում համատարած անգրագիտություն է տիրում, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը հետ հայացք ձգելով նկատեց, որ ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը հենց գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան Ատոմ Մխիթարյանի ղեկավարությամբ, անարգելով կրթական համակարգը, դիպլոմ է ստացել: Չխոսելով անգամ բացակաների մասին՝ ընդգծենք, որ ԱԺ աշխատակազմի ղեկավարը հենց իր ենթակայության տակ գտնվող հիմնարկում է ուսումնական պրակտիկան անցել, գնահատական ստացել իր ենթականերից: Սա ի՞նչ է, եթե ոչ անգրագիտության խթանում մագիստրոսական համակարգում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Թեեւ փաստաթղթերով կամ իրականում ԱԺ նախագահի եղբայր Կառլեն Սիմոնյանը այլեւս կապ չունի միլիարդավոր դրամների տենդերներ շահած «Եվրոասֆալտ» ՓԲԸ-ի հետ, սակայն այժմ «Դատալեքս»-ն է ողողված հիշյալ ընկերության դեմ տարատեսակ հայցերով՝ ֆիզանձերից մինչեւ բանկերին փոխկապակցված կազմակերպություններ եւ ապահովագրական ընկերություններ: «Արինս Կապիտալ», «Ռոգո ինշուրանս», «Արգիշտի 2», «Վիկան», «Բետոնագործ», Սեւակ Բոյաջյան եւ գուցե այլք փորձում են արդարադատություն գտնել «Եվրոասֆալտի» դեմ պայքարում: «Ժողովուրդ»-ը կհետեւի սույն դատական գործերի ընթացքին՝ հասկանալու, թե Ալեն Սիմոնյանի բանակի ընկերը ինչեր է թույլ տվել:

Քաղաքային իշխանությունը շարունակում է «պատժել» ընդդիմախոսներին: Հիմա էլ հերթը Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Պեդրո Զարոկյանինն է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երեւանի ավագանու ՔՊ խմբակցությանը վրդովվեցրել է ընդդիմադիր Պեդրո Զարոկյանի ակտիվությունը. քաղաքային իշխանությունները մտադիր են զսպել նրան, չի բացառվում, որ հարցը հասնի ավագանու ընդդիմադիր անդամին մանդատից զրկելուն եւս: Մեր տեղեկություններով՝ ՔՊ խմբակցությունում այս հարցը քննարկվում է, եւ ավագանու առաջիկա նիստերին հնարավոր է նման նախաձեռնությամբ հանդես գան: Տեղեկության վերաբերյալ դիմեցինք ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախագահ Արմեն Գալջյանին, վերջինս էլ ասաց. «Պեդրո Զարոկյանի վարքը ավագանու յուրաքանչյուր նիստի ընթացքն է խանգարում, նա վիրավորում է նիստին ներկա անդամներին, ինչն անթույլատրելի է: Այս պահին մանդատից զրկելու մասով վերջնական որոշում չունենք, բայց նրա վարքը քննարկման առարկա պետք է դառնա, եւ ըստ այդմ հասկանանք՝ որ տարբերակով ենք շարժվում»: Պեդրո Զարոկյանն էլ մեզ հետ զրույցում ասաց, որ ինքը եւս լսել է նման բան, բայց հստակ ոչինչ չգիտի. «Եթե մանդատից ուզում են զրկեն, պետք է հիմքերն ասեն: Եթե խոսելու, խնդիր բարձրաձայնելու համար են մանդատից զրկում, թող հայտարարեն՝ էլ ժողովրդավարություն չկա»:

ԶՐՈՒՅՑ

«ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՊԵՏՔ Է ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻ», ԳԱԼՍՏՅԱՆ

Երեկ ԱԺ արտաքին հարցերի հանձնաժողովը հաստատեց «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին նախագիծը:

Վաղը մեկնարկելիք ԱԺ նստաշրջանում նախագիծը կքննարկվի լիագումար նիստի ժամանակ: Ընդդիմությունը հայտարարել է, որ չի մասնակցելու քվեարկությանը:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում խոսել է սպասվող զարգացումների, սահմանադրական փոփոխությունների եւ խաղաղության պայմանագրի մասին:

-Տիկին Գալստյան, Ազգային ժողովում քվեարկության դրվեց սահմանազատման հանձնախմբերի կանոնակարգը՝ վերջնական հաստատման, եւ ընդդիմությունը հայտարարել էր, որ քվեարկությանը չի մասնակցելու: Ի՞նչ պիտի տար չմասնակցությունը, երբ իշխանության ձայները բավարար են կանոնակարգին դրական արձագանք տալու համար:

-Մենք թե՛ հանձնաժողովի, թե՛ լիագումար նիստի ընթացքում մանրամասնորեն ներկայացրել ենք մեր փաստարկները: Հանձնաժողովն իրեն վերապահել է պետական մարմնի այնպիսի գործառույթներ, որոնց իրավունքը Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված կարգով չունի: Գործառույթներ, որոնք հանգեցնում են Հայաստանի Հանրապետության սահմանների փոփոխությունների եւ, որքան էլ, որ ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը փորձում է նշել, թե հանձնաժողովը զբաղվելու է Հայաստանի Հանրապետության սահմանների վերականգնումով, բայց նման եզրույթ, որպես այդպիսին, մեր իրավական դաշտում գոյություն չունի: Մենք խոսել ենք մի շարք սկզբունքներից, օրինակ՝ քարտեզների բացակայությունը, Ալմա-Աթայի հռչակագրին արված հղումը, որը, ըստ էության, իր տակ քարտեզ չունի եւ որեւէ քարտեզի վրա ամրագրված չէ: Մենք ունենք նաեւ մի վիճակ, ըստ Միհր Գրիգորյանի խոսքի, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզ կամ գյուղ իր սեփական քարտեզն ունի: Փաստարկներից են նաեւ վեճերի լուծման մեխանիզմների բացակայությունը, կանոնակարգի նախաբանում առկա «ապագա խաղաղության համաձայնագրին» արտահայտությունը՝ հղում տալով մի փաստաթղթի, որը գոյություն չունի: Եվ այս պայմաններում մենք մատնանշեցինք բոլոր խնդիրները՝ նշելով, որ այս գործընթացը ո՛չ իրավաչափ եւ ո՛չ իրավական գործընթաց է՝ լինելով հակաիրավական:

-Իսկ ինչպե՞ս կարելի է դա կանխել:

-Գիտեք, դա ավելի քան պարզ է: Եթե կանխելու հնարավորություն լիներ, ապա մենք կլինեինք քաղաքական մեծամասնությունը, սակայն փոքրամասնություն ենք, որը մարտահրավերները գուժում է, սպառնալիքների վրա մատը դնում է եւ շեշտում, որ այն Հայաստանի Հանրապետության ազգային-պետական շահերը վնասող եւ խաթարող, Հայաստանի ապագան հարցականի տակ դնող փաստաթուղթ է: Ըստ էության՝ կանխելը նաեւ մեր ողջ ժողովրդի խնդիրն է՝ ոտքի կանգնել եւ «ո՛չ» ասելով այս իշխանության ավելի քան 6 տարվա՝ Հայաստանը կործանելու, ապազգային եւ հակապետական վարքագծերին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ Է ԲՐԻԿՍ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցելու է Կազանում հոկտեմբերի 22-24-ը կայանալիք ԲՐԻԿՍ-ի գագաթնաժողովին: Այս մասին լրատվամիջոցներին հայտնել է վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը՝ հավելելով, որ արդեն մեկ ամիս առաջ հաստատված էր վարչապետի մասնակցությունը գագաթնաժողովին:

Հարցին՝նախատեսվո՞ւմ են հանդիպումներ երկրների ղեկավարների հետ՝վարչապետի մամուլի խոսնակը պատասխանեց. «Այդ մասին լրացուցիչ տեղեկություն կտրամադրվի»:

Նշենք՝ վաղը (խմբ.) Ազգային ժողովում կայանալու է կառավարության հետ ավանդական հարցուպատասխանը, որին մասնակցելու է նաեւ վարչապետը: Նիկոլ Փաշինյանը, ամենայն հավանականությամբ, Կազան կմեկնի ուշ երեկոյան, երբ ավարտված կլինի խորհրդարանական հարցուպատասխանը:

Հիշեցնենք, որ Կազանում մեկնարկում է ԲՐԻԿՍ-ի 16-րդ գագաթնաժողովը: Ավելի վաղ Կրեմլի մամուլի ծառայությունից հայտնել էին, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հանդիպում է ունենալու ԲՐԻԿՍ-ի գագաթնաժողովի մասնակից բոլոր պետությունների ղեկավարների հետ:

Միջոցառմանը մասնակցելու է նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

ԻՆՉՈ՞Ւ ՆԱԽԿԻՆ ՄԻՊ-ԵՐԸ ՆԵՐԿԱ ՉԵՆ ԳՏՆՎԵԼ

Հոկտեմբերի 21-ին նշվեց Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ կազմակերպված «Օմբուդսմենական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն եւ մարտահրավերներ» խորագրով երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովը: Պաշտոնական բացմանը ներկա են գտնվել ներկա ՄԻՊ-ը՝ Անահիտ Մանասյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ ԱԺ-ի նախագահ Ալեն Սիմոնյանը, մի շարք դեսպաններ եւ այլ անձինք:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատել է, որ միջոցառմանը նախկին պաշտպաններից ներկա է գտնվել միայն Քրիստինե Գրիգորյանը, իսկ մյուսները՝Կարեն Անդրեասյանը, Արման Թաթոյանը եւ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանը չեն եղել միջոցառմանը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ՀՀ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանի հետ՝ հասկանալու՝ ի վերջո իրենց առաջարկ եղե՞լ է, թե՞ ոչ: Վերջինս ասաց, որ՝ո՛չ, հրավեր չի եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը խոսեց նաեւ Արման Թաթոյանի մամուլի խոսնակ Դիանա Հակոբյանի հետ, ումից կրկին ստացանք նույն պատասխանը՝ հրավեր չի եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց նաեւ ՄԻՊ խորհրդական Արթուր Ասլանյանի հետ՝ հասկանալու, թե ինչու է Քրիստինե Գրիգորյանը միայն ներկա գտնվել եւ ինչու հրավեր չի եղել մյուս նախկին ՄԻՊ-երին, վերջինս ասաց. «Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակին նվիրված հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած միջազգային համաժողովը նախանշված միջոցառումներից առաջինն էր, եւ նախատեսված էր բացառապես պետական մարմինների ներկայացուցիչների, դեսպանների, միջազգային գործընկերների համար:

Առաջիկայում իրականացվելու են նաեւ պաշտպանի հաստատության 20-ամյակին նվիրված այլ միջոցառումներ, այդ թվում՝ նախատեսված ինչպես ներկայիս աշխատակազմի, այնպես էլ նախկին աշխատակիցների եւ տարբեր ժամանակահատվածների պաշտպանների համար: Միեւնույն ժամանակ, նշենք, որ նախկին ՄԻՊ-երի եւ աշխատակիցների աշխատանքի կարեւորությունը շեշտադրված է պաշտպան Անահիտ Մանասյանի ողջույնի ուղերձում եւ մեր կողմից նախապատրաստված՝ ՄԻՊ հաստատության 20-ամյակին նվիրված տեսանյութում»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՀԱՆՐԱՔՎԵ ԼԻՆԻ

«Խաղաղության համաձայնագրի ստորագրման համար Հայաստանում պետք է հանրաքվե անցկացվի»: Այս մասին, ինչպես փոխանցում է ԱՊԱ-ն, հայտարարել է Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Ջիյաֆեթ Ասկերովը:

«Մենք պայմանագիր ենք կնքում ոչ թե Փաշինյանի, այլ հայկական պետության հետ: Այս համաձայնագրի թիկունքում պետք է կանգնի հայ ժողովրդի քաղաքական կարծիքը»,-ասել է նա:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Ադրբեջանի նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը հայտարարել էր, որ Ադրբեջանը ցանկանում է խաղաղության պայմանագիր կնքել ոչ թե վարչապետ Փաշինյանի, այլ Հայաստանի հետ:

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿՎԵԼ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻՆ

Հոկտեմբերի 21-ին Ազգային ժողովում տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նիստ:

Քննարկվել եւ հաստատվել են ԱԺ ութերորդ գումարման ութերորդ նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին եւ հոկտեմբերի 22-ին գումարվող հերթական նիստերի օրակարգի նախագծերը:

Սահմանվել է հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը: Հոկտեմբերի 22-ին գումարվող հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվել է 40 հարց:

Տեղի է ունեցել մտքերի փոխանակություն ընթացիկ քաղաքական հարցերի շուրջ:

ԱԺ խորհուրդը հաստատել է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում եւ դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման եւ Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկը:

Փոփոխություններ են կատարվել ԱԺ խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 4-ի 010-Ա, հոկտեմբերի 25-ի 019-Ա եւ 020-Ա որոշումներում:

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱԶԱՏԵԼ Է ԻՐ ՕԳՆԱԿԱՆԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝Արթուր Գրիգորյանն ազատվել է վարչապետի օգնականի պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով՝ Արթուր Գրիգորյանին ազատել վարչապետի օգնականի պաշտոնից»,- ասվում է վարչապետի որոշման մեջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄՏԱԴԻՐ ԵՆ ՀԱՄՆԵԼ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՄՊԻՉՄԵՆՏԻՆ

Վրաստանի խորհրդարանական մեծամասնության պատգամավորները 81 ստորագրություն են հավաքել երկրի Սահմանադրական դատարան ներկայացվող նոր հայցի համար, որը վերաբերում է նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի կողմից երկրի Սահմանադրության 52-րդ հոդվածի խախտմանը: Համաձայն այդ հոդվածի՝ պետության ղեկավարն արտասահմանում ներկայացուցչական լիազորություններ պետք է իրականացնի կառավարության թույլտվությամբ:

Վրաստանի խորհրդարանի մամուլի ծառայությունը հաղորդել է, որ հայցը Սահմանադրական դատարան կուղարկվի առաջիկա ժամերին:

Եթե Սահմանադրական դատարանը որոշում ընդունի, որով կհաստատվի նախագահի կողմից Սահմանադրության խախտման փաստը, ապա խորհրդարանական մեծամասնությունը մտադիր է նախագահ Զուրաբիշվիլիի նկատմամբ իմպիչմենտի գործընթաց սկսել:

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, մեկնաբանելով իմպիչմենտի գործընթաց սկսելու՝ խորհրդարանական մեծամասնության որոշումը, հայտարարել է, որ Զուրաբիշվիլին պետք է պաշտոնը թողնի ոչ թե որպես նախկին նախագահ, այլ որպես պաշտոնաթող նախագահ:

Կոբախիձեի խոսքով՝ Զուրաբիշվիլիի իմպիչմենտը խորհրդանշական բնույթ կկրի, քանի որ դեկտեմբերին լրանում է նրա նախագահական ժամկետը:

Անցյալ տարվա հոկտեմբերին խորհրդարանական մեծամասնությունն արդեն սկսել էր Զուրաբիշվիլիի իմպիչմենտի գործընթացը, սակայն քվեարկության ժամանակ այդ հարցը ձախողվեց ձայների անբավարարության պատճառով:

ՎԻԵՏՆԱՄԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՆԻ

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ընտրված նախագահ բանակի 67-ամյա գեներալ Լիոնգ Կիոնգը հավատարմության երդում է տվել հայրենիքին, իշխող Կոմունիստական կուսակցությանը եւ Վիետնամի ժողովրդին: Այս մասին հաղորդել է Վիետնամի լրատվական գործակալությունը:

Պետության ղեկավարի պաշտոնակալման արարողությունը տեղի է ունեցել Ազգային ժողովի (միապալատ խորհրդարանի) պատգամավորների կողմից անցկացված քվեարկության արդյունքների հրապարակումից անմիջապես հետո:

Լիոնգ Կիոնգը դարձավ ժամանակակից Վիետնամի պատմության 14-րդ նախագահը: Պետության ղեկավարի պաշտոնում նա փոխարինել է 2024 թվականի մայիսից այս պաշտոնն զբաղեցնող 67-ամյա Թո Լամին, որն օգոստոսին Կոմունիստական կուսակցության կենտկոմի գլխավոր քարտուղար էր ընտրվել գլխավոր քարտուղար Նգուեն Ֆու Չոնգի մահից հետո: Մինչեւ հոկտեմբերի 21-ը Թո Լամը համատեղում էր Կոմունիստական կուսակցության ղեկավարի եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության նախագահի պաշտոնները:

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՄԻ ՊԱՇՏՈՆՅԱ ՉՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ

ԻՆՉՈ՞Ւ Է ՓՈԽՎԵԼ Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Հոկտեմբերի 21-ին աշխարհի քառակի, Եվրոպայի յոթակի, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր (2012), 2016 եւ 2024 թվականի Ամառային Օլիմպիական խաղերի ոսկե մեդալակիր, 2020 եւ մեդալակիր Ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, Եվրոպական խաղերի չեմպիոն (2019), ըմբիշ Արթուր Ալեքսանյանի ծննդյան օրն էր, սակայն իշխանության ներկայացուցիչներից եւ պետական մարմիններից եւ ոչ մեկը չշնորհավորեց չեմպիոնին: ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Հայաստանի Ազգային Օլիմպիական կոմիտեն, ՀՀ նախագահը Վահագն Խաչատուրյանը, որը պատեհ-անպատեհ առիթներով շնորհավորանքներ է հղում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, կամ որևէ այլ իշխանավոր չհիշեց նորանկախ Հայաստանի ամենատիտղոսակիր մարզիկի ծննդյան տարեդարձը:



Ինչո՞վ է վերջին օրերին զբաղված եղել ՀՀ իշխանությունը սպորտի ոլորտում:

Ժողովներ, ԵԽ՝ սպորտի համար պատասխանատու նախարարների 18-րդ համաժողով, հանդիպումներ միջազգային գործընկերների հետ, «Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշար եւ անընդհատ կրկնվող հեծանվարշավներ՝ երկրի վարչապետի գլխավորությամբ. ինչ խոսք, բավականին խիտ եւ հագեցած աշխատանքային շաբաթներ են եղել ԿԳՄՍ նախարարության եւ վարչապետի համար: Սակայն, արդյոք դա արդարացնո՞ւմ է այն, որ կարելի է մոռանալ Հայաստանին համաշխարհային սպորտային որորտում ամենաշատը համբավ բերած մարզիկներից մեկի ծննդյան տարեդարձը:

Ի՞նչ է ստացվում. փաստորեն, Հայաստանի այսօրվա իշխանությունների համար հեծանվարշավները, «Վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարն ու գործընկերների հետ հանդիպումները շատ ավելի առաջնային են, քան երկրին պատիվ ու համբավ բերող մարզիկների հանդեպ հարգանքն ու վերաբերմունքը:

Ո՞վ է Արթուր Ալեքսանյանն ու ինչու պիտի պետական մակարդակով միշտ հիշվեն ու դրական վերաբերմունքի արժանանան այն մարդիկ, ովքեր ձեւավորում են մեր երկրի մասին միջազգային կարծիքը:

Արթուր Ալեքսանյանը ծնվել է 1991 թվականի հոկտեմբերի 21-ին Գյումրիում: Հունահռոմեական ըմբշամարտով սկսել է զբաղվել 2000 թվականին իր հոր՝ Հայաստանի վաստակավոր մարզիչ Գեւորգ Ալեքսանյանի ղեկավարությամբ:

2007-2010 թվականներին հանդես է եկել պատանեկան առաջնություններում: 2010 թվականին դարձել է Եվրոպայի արծաթե մեդալակիր եւ աշխարհի չեմպիոն պատանիների 84 կգ քաշային կարգում:

2012 թվականի Եվրոպայի առաջնությունում Ալեքսանյանը նվաճել է ոսկե մեդալը: Այդ առաջնության ընթացքում նա հաղթել է 5 գոտեմարտում՝ մրցակիցներին տալով ընդամենը մեկ միավոր:

Մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիայի հարցմամբ ճանաչվել է Հայաստանի՝ 2014 եւ 2015 թթ. լավագույն մարզիկ: Նույն թվականին Տաշքենդում կայացած ըմբշամարտի աշխարհի առաջնությունում նվաճել է ոսկե մեդալ:

2015 թվականի ապրիլի 25-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում տեղի ունեցած «Դան Կոլով եւ Նիկոլա Պետրով» ամենամյա միջազգային մրցաշարի 98 կգ քաշային կարգում նվաճել է ոսկե մեդալ: Գրեթե չորս ամիս անց՝ օգոստոսի 8-ին, ԱՄՆ Լաս Վեգաս քաղաքում երկրորդ տարին անընդմեջ հռչակվել է հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն:

2016 թվականի օգոստոսի 17-ին, Ռիոյի ամառային օլիմպիական խաղերում հռչակվել է հունահռոմեական ոճի ըմբշամարտի օլիմպիական չեմպիոն՝ նվաճելով անկախ Հայաստանի պատմության երկրորդ օլիմպիական ոսկե մեդալը: 2017 թվականի օգոստոսին էլ Ալեքսանյանը Փարիզում կայացած ԱԱ-ում հռչակվել է չեմպիոն:

Արթուր Ալեքսանյանը Գյումրու եւ Երեւանի պատվավոր քաղաքացի է, 2011 թվականին արժանացել է նաեւ ՀՀ սպորտի վարպետի կոչման, մեկ տարի անց արժանացել է Մովսես Խորենացու մեդալի, իսկ 2015 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման գործում ներդրած ավանդի, ինչպես նաեւ հունահռոմեական ըմբշամարտի 2015 թվականի աշխարհի առաջնությունում տարած փայլուն հաղթանակի համար պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի շքանշանով:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔԱՂԱՔԱՊԵՏ ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԿՏԱ՞

2021 թվականի նոյեմբերին Գյումրիի 4-րդ քաղաքապետ ընտրված «Բալասանյան դաշինիքի» ընտրացուցակը գլխավորող Վարդգես Սամսոնյանն այսօր, համաձայն «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, հրաժարականի դիմում է ներկայացնելու:

«Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ 2023 թվականին «Քաղաքացիական պայմանագիր»-ը միակողմանիորեն խզեց «Բալասանյան դաշինք» սոցիալական կուսակցության հետ երկու տարի առաջ ստորագրած համագործակցության մասին հուշագիրը, հայտարարել էր կուսակցությունը:

Այս քայլը իշխանությունը մեկնաբանեց՝ կարծում են, որ Գյումրին չի կառավարվում Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով, եւ «քաղաքում իրականացվում է ստվերային կառավարում, ինչը անարդյունավետ է դարձնում թե՛ Գյումրիի քաղաքապետարանի գործունեությունը, եւ թե՛ «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչների աշխատանքը քաղաքապետարանի գործադիր օղակներում:

Այս հայտարարությունից եւ բազմաթիվ խմորումներից հետո ակնկալվում էր, որ ՔՊ-ն կոշտ եւ կտրուկ քայլերի կգնա, սակայն նրանք Գյումրու քաղաքապետ Վարդգես Սամսոնյանին անվստահություն չհայտնեցին, ինչը ակնկալվում էր:

ՔՊ-ն Գյումրիում քաղաքապետի ընտրություններում պարտությունը դեռ չի մարսել: Բազմաթիվ ճնշումներ են եղել Վարդգես Սամսոնյանի նկատմամբ եւ, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների, հենց այս ճնշումներն էլ դարձել են հրաժարականի պատճառ:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապվել Գյումրու քաղաքապետի եւ նրա մամուլի քարտուղարի հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց նաեւ գյումրեցի ՔՊ-ական պատգամավոր Էմմա Պալյանից տեղեկանալ՝ լսել է արդյոք քաղաքապետի հրաժարականի լուրերի մասին, սակայն նա ոչինչ չգիտեր դրա վերաբերյալ: Հետաքրքրվեցինք՝ արդյոք Նիկոլ Փաշինյանի վերջին այցը Գյումրի կապված է սրա հետ, Պալյանը նշեց. «Վարչապետի այցի ժաանակ այլ քաղաքական ուժի օրակարգին չենք անդրադառնում: Ամեն քաղաքական ուժ ունի իր օրակարգը, թե ինչ են որոշել «Բալասանյան դաշինիքի» անդամները, ես տեղյակ չեմ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԵՂՔԸ ԲԱՐԴՈՒՄ Է ԲՈԼՈՐԻ ՎՐԱ

«Մեր հայրենիքից հանձնվել են տարածքներ, որից հետո ստեղծվել է աշխատանքային կանոնակարգ»: Այս մասին հայտարարել է Բագրատ Սրբազանը:

«Ադրբեջանի պահանջով Հայաստանի Հանրապետությունից, առանց որեւէ հիմքի, հանձնվել են տարածքներ, մասնավորապես՝ Տավուշի շրջանից:

Աշխատանքային կանոնակարգ կոչվածի ընթացքը վկայում է, որ Տավուշում տեղի ունեցածը հակապետական, հակասահմանադրական ու հակազգային հանցագործություն է:

Բոլոր փաստաթղթերը եղել են մեկ մարդու ստորագրությամբ, բայց այսօր հավաքական մեղավորության հիմքն է դրվում: Աշխատանքային կանոնակարգն անցել է Սահմանադրական դատարանով, անցնում է Ազգային ժողովով, ու այդպիսով այդ մարդը մեղքի բաժինը տեղափոխում է բոլորի վրա:

Նախ Սահմանադրական դատարանի դատավորներ, հետո Ազգային ժողովի խմբակցություն, այնուհետեւ անուղղակի ձեւով բոլոր այն հայ մարդկանց վրա, որոնք քվեարկել են այս կուսակցության օգտին»,- հայտարարել է նա:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԳԻՆԵՏՈՒՆ» ՀՅՈՒՐԱՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ

ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ալեքսան Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել:

Մեղադրանքն է ներկայացվել այն բանի համար, որ նա քննությամբ չպարզված մի խումբ անձանց հետ խմբի կազմում, միմյանց գործողությունները փոխլրացնելով, 2023 թվականի նոյեմբերի 12-ին՝ ժամը 18.00-ից 19:00-ի սահմաններում, նույն բնակավայրի փաստացի բնակիչ Արտուր Արարատի Մեսրոպյանի կողմից օրեր առաջ անօդաչու թռչող սարքն օդ բարձրացնելու, եւ այդ պատճառով 2023 թվականի նոյեմբերի 9-ին Ալեքսան Ներսիսյանի կողմից, Արտուր Մեսրոպյանի դեմքին հարվածելու հարցերի շուրջ պարզաբանումներ կատարելու նպատակով հասարակական վայր հանդիսացող Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրի 3-րդ փողոցում գործող, իրեն պատկանող «Գինետուն» հյուրատան դիմաց հանդիպել են նրա եւ նրա հետ նույն վայր ժամանած Հայկ Աբրահամի Ստեփանյանի, Արման Աբրահամի Ստեփանյանի, Աբրահամ Հայկի Ստեփանյանի հետ, եւ Ալեքսան Ներսիսյանը, քննությամբ չպարզված մի խումբ անձանց հետ, վերոնշյալ չնչին առիթն օգտագործելով, սեփական անձի առավելություններն ընդգծելով, հանդուգն վարքագիծ դրսեւորելով ու համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, սեռական բնույթի հայհոյանքներ, անպարկեշտ արտահայտություններ են հնչեցրել, առաջացրել են վիճաբանություն եւ ծեծկռտուք, որի ժամանակ, Ալեքսան Ներսիսյանի հետ նշված վայր եկած եւ քննությամբ չպարզված մի խումբ անձինք բռնի գործողություններ կատարելով՝ ծեծի են ենթարկել Արտուր Մեսրոպյանին, ինչպես նաեւ նրա հետ նույն վայր ժամանած համագյուղացիներ Հայկ Աբրահամի Ստեփանյանին, Աբրահամ Հայկի Ստեփանյանին եւ Արման Աբրահամի Ստեփանյանին, որին միջամտել են վիճաբանության ձայներից հավաքված մեծ թվով համագյուղացիներ, իսկ Ալեքսան Ներսիսյանն իր մոտ նախապես ապօրինի ձեռք բերված եւ պահվող «Մակարով» տեսակի 9մմ տրամաչափի ակոսափող հրազենի գործադրմամբ կրակոցներ է արձակել: Այդ ամենի արդյունքում խոչընդոտվել է ինչպես հիշյալ բնակավայրի բնակիչների անդորրը, այնպես էլ հասարակական նշանակության օբյեկտ հանդիսացող «Գինետուն» հյուրատան բնականոն աշխատանքը՝ վախ ու տարակուսանք առաջացնելով այնտեղ հյուրընկալված քաղաքացիների շրջանում: Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել ու գործը ուղարկվել է դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆ ԿՐԱԿ ԷՐ ԱՐՁԱԿԵԼ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ այս տարվա հուլիսին Կոտայքի ոստիկանության շենքում կրակոցներ իրականացրած օտարերկրացու դեպքով որոշում է կայացվել, ու գործն ուղարկվել է դատարան:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Համզանաջի Ջուդա Ալ-Ինիզիին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, իր կողմից կատարված ահազանգի վերաբերյալ պարզաբանումներ կատարելու նպատակով, հրավիրված լինելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժին եւ գտնվելով նշված բաժնի հերթապահ մասում, նկատելով, որ ոստիկանության Կոտայքի բաժնի աշխատակից Մարզպետ Աբրահամյանը ոստիկանության բաժնի զինանոցում հաշվառված հրազեն հանդիսացող «ԱԿՄ» տեսակի ՎԴ244437 գործարանային համարի ակասափող ինքնաձիգն առանց հսկողության թողել է հերթապահ մասում գտնվող սեղանի կողքին, օգտվելով հերթապահ մասում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների անուշադրությունից, 2024թ.-ի հուլիսի 20-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, հափշտակել է ռազմամթերք հանդիսացող փամփուշտներով լիցքավորված հրազեն հանդիսացող նշված ինքնաձիգը:

Դրանից հետո, երբ ոստիկանության աշխատակիցներ Մարզպետ Աբրահամյանը եւ Շալիկո Սահակյանը, նկատելով դա, փորձել են վերցնել ինքնաձիգը, Համզահնաջի Ջուդահ Ալ-Ինիզին, ինքնասպանություն գործելու նպատակով, արձակել է թվով 24 կրակոց՝ դրանցից մեկով վնասելով Շալիկո Սահակյանի ձեռքը, վերջինիս առողջությանն անզգուշությամբ պատճառելով աջ դաստակի թիկնային մակերեսի 2-րդ մատի հիմային ֆալանգի կոտրվածք, տարածիչ եւ ծալիչ ջլերի, նյարդի վնասումներով սալջարդ վերքի ձեւով առողջության տեւական քայքայումով միջին ծանրության վնաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆ՝ 8-ԱՄՅԱ ԱՂՋՆԱԿԻ ՀԱՆԴԵՊ

Իրավապահները շարունակում են բացահայտումները անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգությունների դեպքերով:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Վարդան Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2023 թվականի ամռանից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում, ակնհայտ գիտակցելով 2014 թվականին ծնված 8-ամյա աղջիկ երեխայի չգիտակցելու համգամանքը, Կոտայքի մարզի Քասախ գյուղի վարչական տարածքում, վերջինիս հետ առնվազն 4 անգամ սեքսուալ բնույթի զրույցներ է վարել եւ նրա մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնելուն ուղղված արարքներ կատարել՝ մասնավորապես առաջարկել է սեռական ակտի մասին պատմել, հանել միմյանց հագուստները, սեռական օրգանները հպել միմյանց, ցուցադրել սեռական հարաբերությունների վերաբերյալ տեսանյութեր եւ այլ դրսեւորումներ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նշված գործողությունները կատարելու համար 200 ՀՀ դրամ է տվել վերջինիս, ինչպես նաեւ առաջարկել է 1.000 ՀՀ դրամի դիմաց սեռական հարաբերություն ունենալ, ինչից վախեցած՝ 8-ամյա աղջիկը ամեն անգամ փախուստի է դիմել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի նախկին նախագահ Արթուր Բաղդասարյանին եւ նրա ընտանիքի անդամներին հոկտեմբերի 29-ին հրավիրել են Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Բաղդասարյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

ԼՈՒՐԵՐ

ՆԳՆ ՓԾ-Ն ԱՄՓՈՓԵԼ Է ՇԱԲԱԹԸ

Հոկտեմբերի 14-ից 20-ը ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում գրանցվել է 467 դեպք, որից 148-ը՝ արտակարգ:

Մասնավորապես՝ հրդեհի՝ 57, փլուզման, տեղատարափ անձրեւի՝ 3-ական, քարաթափման, որոնողափրկարարական, մերկասառույցի՝ 2-ական, ուժեղ քամու, կենսաապահովման կոմունալ համակարգերում վթարի՝ 1-ական, վայրի կենդանիների հարձակման՝ 7, թունավորման՝ 5, օձի նկատման՝ 13, կեղծ ահազանգի՝ 6, ինքնասպանության փորձի՝ 8, ճանապարհատրանսպորտային պատահարի՝ 67, ինչպես նաեւ՝ կենցաղային կանչի՝ 162, հրդեհի ծագման սպառնալիքի՝ 30, հրդեհի կեղծ կանչի՝ 24, 74 այլ դեպքեր:

Եղանակային պայմաններով եւ այլ գործոններով պայմանավորված՝ գրանցվել է տրանսպորտային միջոցների արգելափակման 50 դեպք: Փրկարարներն օգնություն են ցուցաբերել 57 քաղաքացու եւ անվտանգ տարածք տեղափոխել ավտոճանապարհներին արգելափակված 50 տրանսպորտային միջոց:

Նախորդ շաբաթվա ընթացքում տուժել է 98, զոհվել՝ 14 մարդ: Փրկարարական գործողությունների արդյունքում փրկվել է 2 մարդ:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԿԻՆԸ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՆՈՒՄ ԷՐ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

ՆԳՆ քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում ստացված տեղեկությունը օտարերկրացի կնոջ մասին էր: Ըստ տեղեկության՝ կինը տարբեր տեսակի թմրամիջոցներ էր ներմուծում Հայաստան եւ համացանցի միջոցով կազմակերպում դրանց իրացումը:

«ՔՈԳՎ ԹԱՇԴՊ վարչության ծառայողների լայնածավալ ու բազմաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց կնոջ ինքնությունը, ճշտվեց նաեւ բնակության վայրը»,- նշեց ՔՈԳՎ ավագ օպերլիազոր Դավիթ Պետրոսյանը:

Դեպքի առթիվ Շենգավիթի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ: Հոկտեմբերի 18-ին դատարանի որոշմամբ՝ խուզարկություն կատարվեց 27-ամյա կնոջ բնակության վայրում:

«Խուզարկության արդյունքում հայտնաբերվեց էլեկտրոնային 4 կշեռք, մոտ 97 գրամ «Ալֆա-ՊՎՊ» տեսակի թմրամիջոց, ընդհանուր 74 փաթեթ՝ ընդհանուր 145 գրամ մեֆեդրոն տեսակի թմրամիջոց, որը նախատեսված էր տարբեր վայրերում տեղադրելու համար»,- հայտնեց Դավիթ Պետրոսյանը:

27-ամյա կինը ձերբակալվել եւ ներկայացվել է Շենգավիթի քննչական բաժին: Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 127 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ՝ ՀԱՆՎԵԼ Է ԳՐԱՌՈՒՄԸ

Հայաստանի տարբեր վայրերում տեղադրված են տվյալ բնակավայրի անգլերեն գրառումը, սրտի պատկեր, որը նշանակում է՝ես սիրում եմ այդ բնակավայրը: Տավուշի մարզի Իջեւան համայնքի Աչաջուր գյուղից մի երիտասարդ (նրա անուն-ազգանունը հարկ չենք համարում հրապարակել) նման երկու ցուցանակներ տեղադրել է Կիրանցում՝ սահման հանդիսացող պատի դիմաց ու Աչաջուր գյուղում: Կիրանցի բնակիչներից տեղեկացանք, որ սիրո խոստովանություն այդ կոնստրուկցիան իշխանության կարգադրությամբ հանվել է: Այն տեղադրվել է մոտ 15 օր առաջ, հանվել՝ անցած հինգշաբթի կամ ուրբաթ օրը: Պատճառաբանել են, որ այն անօրինական է տեղադրված: Հանվել է նաեւ Աչաջուր գյուղում տեղադրվածը: Հարց՝ Իջեւան քաղաքում՝ եկեղեցու պատի տակ տեղադրված Նիկոլ Փաշինյան- քայլողի արձանն անօրինակա՞ն չի տեղադրված, ինչո՞ւ դա չեն հանում: Կիրանց գյուղի բնակիչները կարծում են, որ Կիրանցի «սիրո խոստովանության ցուցանակը» հանել են Ադրբեջանի պահանջով, որպեսզի սահմանազատման անվան տակ այս տարի Կիրանցից Ադրբեջանին հանձնված, Ադրբեջանի տարածք դարձած տեղանքից այդ գրառումը տեսանելի չլինի:

ՉԱՐՁՐԿՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

2021թվականի սեպտեմբերից՝ ավելի քան 3 տարի Իջեւան համայնքի Գանձաքար գյուղի միջնակարգ դպրոցի 465 աշակերտները դասեր են անում գյուղի մշակույթի տանը եւ փոստային բաժանմունքի շենքի 2-րդ հարկում՝ մասնավոր անձին պատկանող տարածքում, հարմարեցված դասասենյակներում: Դպրոցի նախկին շենքը 4-րդ կարգի վթարային էր: Փոստային բաժանմունքի շենքի 2-րդ հարկի տարածքի համար Գանձաքարի դպրոցը մասնավոր անձին ամեն ամիս վճարում է 150 հազար դրամ: Գանձաքարի դպրոցի շենքի շինարարության համար հատկացվել է 1 միլիարդ 882 միլիոն դրամ, շինարարությունն իրականացնում է «Բիդեք» ընկերությունը: Դպրոցի շենքը պետք է շահագործման հանձնվեր դեռ 2023 թվականի ամռանը, սակայն շինարարության ավարտի ժամկետը հետաձգվել է մինչեւ 2024 թվականի հունիս: 2024-2025 ուսումնական տարին արդեն երկու ամիս մեկնարկել է, սակայն դպրոցի նոր շենքը պատրաստ չէ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել, թե երբ է ավարտվելու Գանձաքարի դպրոցի շենքի շինարարությունը: Մարզպետարանից պատասխանել են. «Գանձաքարի դպրոցի շենքի շինարարություն ավարտված է: Առաջիկայում կավարտվի դպրոց մոտեցող ճանապարհահատվածի հիմնանորոգումը, որից հետո դպրոցը կշահագործվի»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՑԱՆԿ

ՈՎՔԵՐ ԵՎ ԵՐԲ ՊԵՏՔ Է 2024-Ի ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

Ազգային ժողովը 2022 թվականի դեկտեմբերին ընդունեց բաղաքացիների եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ ներդնելու նախագիծը, ըստ որի՝ բոլոր հայաստանցիները 2025 թվականից պարտավորված կլինեն տարեկան մեկ անգամ իրենց եկամուտների մասին հաշվետվություն ներկայացնել պետությանը:

2023 թվականի համար պարտավոր էին հայտարարագիր ներկայացնել

ա) հանրային ծառայողները,

բ) այն անձինք, ովքեր բիզնեսով են զբաղվում՝ հիմնականում խոշոր բիզնեսի ներկայացուցիչները, փոքր եւ միջին բիզնեսը դեռ չի մտնում այս ցանկում,

գ) այն մարդիկ, ովքեր բանկում փոխառություններ ունեն, օրինակ՝հիփոթեքային վարկեր են վերցրել՝20 մլն դրամից ավելի: Այդ երեք խումբն է 2024-ին 2023-ի համար հայտարարագիր են ներկայացրել»:

2024 թվականի համար պետք է 2025 թվականի հունվարի 1-ից հայտարարագիր ներկայացնեն բոլոր աշխատողները, ինչպես նաեւ փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները:

Ի՞նչ է անհրաժեշտ եկամուտների հայտարարագիր ներկայացնելու համար: ArmLur.am-ը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կայքից տեղեկանում է՝ կա 2 տարբերակ:

Տարբերակ առաջին

Բջջային հեռախոսի միջոցով, ինչի համար անհրաժեշտ է՝

ունենալ նույնականացման քարտ (ID Card), իսկ չունենալու դեպքում՝ ձեռք բերել այն ՀՀ ՆԳՆ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային ցանկացած գրասենյակից:

Նույնականացման քարտով եւ բջջային հեռախոսով այցելել Ձեր կամ նախընտրելի այլ բջջային կապի օպերատորի ցանկացած սպասարկման կենտրոն, որտեղ բջջային հեռախոսահամարի քարտը (SIM) կփոխարինվի նոր քարտով, իսկ օպերատորին փոխելու դեպքում՝ կտեղադրվի նոր քարտ:

Բջջային կապի օպերատորի սպասարկող անձնակազմի օգնությամբ եւ Ձեր մասնակցությամբ ակտիվացնել էլեկտրոնային նույնականացումը:

Ակտիվացնել էլեկտրոնային ստորագրության ծառայությունը՝կապի օպերատորի սպասարկման կենտրոնում, ինչպես նաեւ ինքնուրույն՝ վճարային տերմինալների միջոցով կամ այցելելով՝էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի կայք:

Տարբերակ երկրորդ

Էլեկտրոնային կրիչ պարունակող նույնականացման քարտով, ինչի համար անհրաժեշտ է՝

ունենալ մինչեւ 2023 թվականի փետրվարի 15-ը Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային գրասենյակից ստացած էլեկտրոնային չիպ պարունակող վավեր նույնականացման քարտ, որի հետ առանձին ծրարով տրամադրվել են PIN եւ PUK ծածկագրեր:

Ունենալ ընթերցող սարք, որը կարող եք նաեւ ձեռք բերել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից:

Այցելելով կայք եւ հետեւելով ուղեցույցներին՝ ակտիվացնել էլեկտրոնային քարտը եւ ստանալ էլեկտրոնային ստորագրություն:

Անհարժեշտ է ընդգծել, որ այժմ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության տարածքային գրասենյակները PIN եւ PUK ծածկագրեր չեն տրամադրում, անհրաժեշտ է մետենալ բջջային օպերատորի գրասենյակ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՈՐՏԵՂ Է ԱՐԳԵԼՎՈՒՄ ԻՆՔՆԱԳԼՈՐ ՔՇԵԼ

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ««Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով կկանոնակարգվի անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթեւեկությունը:

Օրենսդրական փոփոխություններով սահմանվել է.

• «անհատական շարժունակության միջոց» հասկացությունը, որը գործող կարգավորումներով բացակայում էր: Ըստ այդմ՝ անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցը մեկ կամ մի քանի անիվ (գլանափող) ունեցող տրանսպորտային միջոց է, որը նախատեսված է էլեկտրական շարժիչի օգտագործմամբ մարդու անհատական տեղաշարժման համար (էլեկտրական սկուտեր, էլեկտրական սքեյթբորդ, գիրոսկուտեր, սեգվեյ, միանիվ եւ այլ նմանատիպ միջոցներ):

• անհատական շարժունակության միջոց վարելու իրավունք կունենան 18 տարեկանից բարձր տարիք ունեցող, ինչպես նաեւ 16 տարին լրացած եւ «AM» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձինք: Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթեւեկությունը կթույլատրվի հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով կամ հեծանվորդների համար գոտիով, վերջիններիս բացակայության դեպքում՝նաեւ օրենքով սահմանված այլ վայրերում: Մինչեւ 18 տարեկան (բացառությամբ 16 տարին լրացած եւ «AM» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող) անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթեւեկության թույլատրելի վայրերը կսահմանվեն համայնքի ավագանու կողմից:

• Անհատական շարժունակության միջոցները վարձակալությամբ տրամադրող կազմակերպությունների համար նախատեսվում է պարտավորություն, որպեսզի բացառեն այդ միջոցները 25 կմ/ժ-ից ավելի արագությամբ վարելը: Նախատեսված է նաեւ նվազագույն աշխատավարձի 29-ապատիկի չափով տուգանք, եթե անհատական շարժունակության միջոցը օրենքով սահմանված կարգով կահավորված չէ արագությունը չափող սարքավորումով: Կարգավորումն ուժի մեջ կմտնի 2025 թ. սեպտեմբերի 1-ից:

• Արգելվում է անհատական շարժունակության միջոցով տեղափոխել ուղեւոր կամ բեռ (բացառությամբ՝այդ միջոցն օգտագործողի կողմից առանց ձեռքերի օգտագործման պահվող բեռի, օրինակ՝ ուսապարկ): Ապրանքների առաքում իրականացնող, հեծանիվ կամ մոպեդ վարող անձի կողմից հեծանիվը կամ մոպեդն առանց սաղավարտի կամ չկոճկած սաղավարտով վարելու համար նախատեսվում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով:

• Երթեւեկելի մասում ինքնագլորների երթեւեկությունը թույլատրվում է մեկ շարքով, արգելվում է վարել թունելներում, թաց ծածկույթ ունեցող ճանապարհներին եւ այլն:

• Անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթեւեկությանը ներկայացվող պահանջները խախտելու համար նախատեսվել է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Նախաձեռնության առաջնային նպատակը ՀՀ-ում այս ոլորտում միջազգային փորձին համահունչ նոր մշակույթի ձեւավորումն է:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

«Ակբա բանկը» մեկնարկել է հրապարակային առաջարկով 15.000.000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար եւ 5.000.000.000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի տեղաբաշխումը:

Բանկը տեղաբաշխելու է 150.000 (հարյուր հիսուն հազար) դոլարային եւ 50.000 (հիսուն հազար) դրամային պարտատոմս:

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունն ԱՄՆ դոլարի դեպքում 6% է, ՀՀ դրամի դեպքում՝ 11%:

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 60 ամիս է, տեղաբաշխումը մեկնարկելու է 2024 թվականի հոկտեմբերի 21-ին եւ տեւելու է մինչեւ դեկտեմբերի 2-ը ներառյալ:

ՀՀ դրամի դեպքում մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարի դեպքում՝ 100 (հարյուր) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը պետք է լրացնի եւ «Ակբա բանկ» ներկայացնի պարտատոմսերի ձեռքբերման հայտ:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ֆիզիկական անձանց համար՝

- Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ
- Դոլարային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ իրավաբանական անձանց համար՝

- Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ
- Դոլարային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2024 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ թույլ տված հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը: Այս մասին հայտնում են ՊԵԿ-ից:

2024 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով 53 հարկ վճարողի մոտ արձանագրվել է «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում:

Հսկողական միջոցառումների արդյունքում, հարկ վճարողներին ընդհանուր առմամբ առաջադրվել է 21.3 մլն դրամի չափով տուգանք:

«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում թույլ տված հարկ վճարողների ցանկը՝ գործունեության համապատասխան օբյեկտների լուսանկարներով, կցված է ՊԵԿ կայքում:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Գ

ՓՐԱՅՎԻԹ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՎԵԼՈՒ ԵՆ ՆՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Հոկտեմբերի 21-ին Հյուսիսային պողոտա 10 հասցեում «Արդշինբանկը» բացեց նոր գրասենյակ փրայվիթ բանկինգի հաճախորդներին սպասարկելու համար: Գրասենյակի նպատակն է իր հաճախորդներին տրամադրել ծառայությունների համալիր փաթեթ՝ կարեւորելով անհատական մոտեցումը, հաճախորդի ժամանակը եւ պրեմիում կարգավիճակը: Բացմանը ներկա էին Արդշինբանկի ղեկավար կազմը, խոշոր բիզնեսի ներկայացուցիչները, ընկերությունների թոփ մենեջերներ, անհատ ձեռներեցներ եւ հաճախորդներ:

Նոր գրասենյակը համապատասխանում է փրայվիթ բանկինգի հաճախորդների նկատմամբ «Արդշինբանկի» հատուկ վերաբերմունքի գաղափարախոսությանը. այն ժամանակակից է եւ միեւնույն ժամանակ դասական, ինչը խորհրդանշում է նորագույն մոտեցումները աշխատանքին՝ պահպանելով դասական բանկային գործի լավագույն ավանդույթները: Գրասենյակն ունի հանդիպումների հարմարավետ սենյակներ, որտեղ հաճախորդները կարող են քննարկումներ ունենալ իրենց անձնական մենեջերի հետ: Այստեղ կա նաեւ Mastercard միջազգային վճարային համակարգի հանդիպումների բրենդավորված սենյակ, որը կծառայի «Արդշինբանկի» պրեմիում Mastercard քարտապաններին՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով վերջիններիս օգտվել այս վճարային համակարգի գործընկերների բացառիկ արտոնություններից՝ բիզնեսի, մշակույթի, ճանապարհորդական ապահովագրության, ապրելակերպի եւ անհատական զարգացման այլ ոլորտներում:

Վրաստանում եւ Հայաստանում Mastercard-ի տարածաշրջանային տնօրեն Դավիթ Ջգուդաձեն, հյուրընկալվելով բացման արարողությանը, մասնավորապես նշեց. «Մենք ուրախ ենք տեսնել «Արդշինբանկի» նոր՝ փրայվիթ գրասենյակի բացումը, որն արտացոլում է պրեմիում ծառայությունների բացառիկությունը. մի բան, որի ջատագովն է Mastercard-ը: Mastercard-ի բրենդավորմամբ հատուկ տարածքի շնորհիվ մենք հպարտությամբ առաջարկում ենք «Արդշինբանկի» հաճախորդներին յուրահատուկ առավելություններ եւ բացառիկ փորձառություն: Այս համագործակցությունն ամրապնդում է մեր հանձնառությունը՝ տրամադրելու ոչ միայն բանկային լուծումներ, այլեւ ապրելակերպին նոր որակ հաղորդող արտոնություններ մեր պրեմիում քարտապաններին»:

Գրասենյակի բացման ժամանակ «Արդշինբանկի» վարչության նախագահի տեղակալ, փրայվիթ բանկինգի տնօրեն Արթուր Գյուլազյանը, նշեց. ««Արդշինբանկը» մշտապես եւ հաջողությամբ զարգացնում է իր ծառայությունների առաջարկները փրայվիթ բանկինգի ոլորտում, ձգտում է հաշվի առնել իր հաճախորդների բոլոր կարիքներն ու պահանջները, հատկապես հաշվի առնելով թվային ապրանքների աճող պահանջարկը: Վերջին տարիներին մենք հսկայական աշխատանք ենք կատարել այս ուղղությամբ, նկատելի է փրայվիթ սեգմենտի հաճախորդների բազայի նկատելի աճ, եւ սա բիզնեսի այս գծի հետագա զարգացման հիմնական ուղենիշն ու խթանն է: Գրասենյակի այսօրվա բացումը մեր մտադրությունների լրջության վառ ապացույցն է»:

Ավելացնենք, որ բառացիորեն մի քանի օր առաջ Global Banking & Finance Review ֆինանսական ամսագիրը երկրորդ անգամ ճանաչեց «Արդշինբանկի» փրայվիթ բանկինգը լավագույնը Հայաստանում, եւ սա արդեն երրորդ մրցանակն է այս ուղղության համար. նախորդը նույն ընկերության կողմից՝ 2023 թվականին էր, եւս մեկը միջազգային Asian Banking and Finance ամսագրի կողմից, որը «Արդշինբանկին» շնորհել է «2024 թվականի լավագույն Փրայվիթ բանկ Հայաստանում» անվանակարգը:

Նշենք, որ «Արդշինբանկը» բազմիցս ճանաչվել է լավագույնը տարբեր միջազգային կառույցների կողմից, ինչպես, օրինակ, The Banker, Global Finance, Euromoney, Thomson Reuters, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ (EBRD), Եվրասիական զարգացման բանկ եւ այլն:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ Գ

ԻԴՐԱՄԸ ԵՎ IDBank-Ը՝ Mantashyants Global Expo-ՈՒՄ

«Իդրամն» ու IDBank-ը մասնակցել են Mantashyants Global EXPO 2024 ցուցահանդեսին, որտեղ ներկայացված էին 40-ից ավելի ոլորտների շուրջ 120 ընկերություններ: Ցուցահանդեսը պրոֆեսիոնալ հարթակ ծառայեց գործարարների համար՝ ծանոթանալու այլ բիզնեսներին, տեղեկանալու յուրաքանչյուր բիզնեսի առանձնահատկություններին եւ ընձեռած հնարավորություններին:

Բանկի եւ «Իդրամի» թիմերը ներկա էին՝ պատմելու ընկերությունների տրամադրած լայն հնարավորությունների մասին, որոնք բիզնեսներին առաջարկում են օգտվել ամբողջական փաթեթից ու ընդլայնել համագործակցության շրջանակը՝ տրամադրելով բացառիկ փաթեթներ՝ յուրաքանչյուր բիզնեսի համար առաջարկելով համապատասխան ինդիվիդուալ լուծում:

Իդրամի ՓՄՁ ներգրավման բաժնի ղեկավար Աղվան Աբրահամյանի խոսքով՝ 22,500 գործընկերներն Իդրամն ընտրել են հարմարավետության, ճկունության, ստանդարտներից դուրս, պարզ եւ միշտ հասանելի լինելու համար:

««Իդրամը» իսկական հաջողված Made in Armenia լուծում է. իզուր չէ, որ մեզ անվանում են ազգային վճարային համակարգ: Մենք նաեւ հաճախորդների թիվ մեկ ընտրությունն ենք QR-վճարումների հարցում, եւ նրանք մշտապես փնտրելու են Իդրամի QR-ը բիզնեսների դրամարկղերում» - նշեց Աղվան Աբրահամյանը:

Իր ելույթում նա ներկայացրեց Իդրամի ծառայություններն ու նախաձեռնությունները, որոնք օգնում են բիզնեսներին աճել ու զարգանալ՝ տրամադրելով պատրաստի լուծումներ ու թույլ տալով չմտահոգվել հավելյալ գործիքների կիրառման ու ծրագրերի ներդրման մասին:

Ցուցահանդեսի ընթացքում IDBank-ի եւ Իդրամի տաղավարում մասնագետները բիզնեսներին ներկայացնում էին բիզնեսների համար ծառայությունների ամբողջական փաթեթը՝ գործող հատուկ առաջարկով ու նոր հնարավորություններով: IDBank-ը բիզնես հաճախորդների համար ստեղծել է անհատականացված բանկային լուծումներ՝ հարմարեցված վերջիններիս կարիքներին, որոնք առավելագույնս ծառայում են բիզնեսների կայուն զարգացմանն ու աճին:

IDBank-ը բիզնեսներին առաջարկում է բիզնես քարտեր եւ վարկեր՝ հատուկ պայմաններով, IDsalary աշխատավարձային բացառիկ փաթեթը, վճարային գործիքներ, հաշիվների բացում եւ սպասարկում, ինչպես նաեւ ապահով ավանդի հնարավորություն եւ այլն:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԵԲՅՈՒՏԱՅԻՆ ՀԱՄԵՐԳՆԵՐ՝ ՓԱՐԻԶՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 28-ին եւ 29-ին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը համերգներով հանդես եկավ Փարիզի երկու անվանի՝ «Սալ Գավո» եւ Փարիզի ֆիլհարմոնիայի «Սիտե դե լա մյուզիք» համերգասրահներում՝ ներկայացնելով հայ եւ ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Առաջին համերգը տեղի ունեցավ սեպտեմբերի 28-ին՝ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ եւ անվանի դաշնակահարներ Լուի Լորթիի ու Էլեն Մեղսիեի մասնակցությամբ: Ծրագրում ներկայացված էին Կլոդ Դեբյուսիի, Ֆրանսիս Պուլենկի եւ Էդվարդ Միրզոյանի ստեղծագործությունները:

«Փարիզը կարեւոր կենտրոն է աշխարհի մշակութային քարտեզի վրա: Մեզ համար փայլուն ձեռքբերում էր, որ տոմսերը վաճառված էին վաղուց: Փարիզյան այս ելույթները շատ կարեւոր էին, քանի որ համերգային շրջագայությամբ վաղուց չէինք եղել Ֆրանսիայում: Կարեւոր է, որ այս գործակցությունը լինի շարունակական, եւ մեր երկրների փոխհարաբերությունների մասին ոչ միայն խոսենք, այլեւ գործնական քայլեր ձեռնարկվեն այս ուղղությամբ»,-ամփոփելով Փարիզի համերգային շրջագայությունը՝ ասել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:

Հյուրախաղերի երկրորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ Փարիզի ֆիլհարմոնիայի «Սիտե դե լա մյուզիք» համերգասրահում հանդես եկավ դեբյուտային համերգով, որի տոմսերը վաղուց սպառված էին: Համերգային ծրագրում ընդգրկված էին Արամ Խաչատրյանի ամենահայտնի ստեղծագործությունները: Նվագախմբի հետ որպես մենակատար ելույթ ունեցավ ֆրանսահայ թավջութակահար Աստղիկ Սիրանոսյանը:

«Մեր առաքելությունն ենք համարում բոլոր շրջագայություններում կատարել հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Կարծում եմ՝ այս համերգները կօգնեն, որ Փարիզի հանդիսատեսն ավելի լավ ճանաչի մեր մշակույթը: Մեծ ձեռքբերում կլինի, որ մեր նվագախմբի միջոցով աշխարհը ճանաչի հայ ստեղծագործողներին»,-ավելացրել է Սերգեյ Սմբատյանը:

Համերգի աջակիցներն են Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունը, ՀԲԸՄ Ֆրանսիան եւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ստեղծվել է երաժշտության ուժով հոգեւոր վերելքի ձգտման եւ հայ երաժշտական ավանդույթների պահպանման նպատակների շուրջ միավորված մի խումբ դասական երաժշտության նվիրյալների ուժերով: Իր հստակ ու նրբագեղ հնչողությամբ, ինչպես նաեւ ազդեցիկ կատարողական ոճով ճանաչված նվագախումբը սպասված հյուր է ինչպես Հայաստանի, այնպես էլ աշխարհի առաջատար համերգասրահներում: Հայաստանում եւ արտերկրում անցկացվող տարեկան ավելի քան 50 համերգների հարուստ երկացանկերը ներառում են տարբեր ժանրերի եւ կատարողական ձեւաչափերի համերգներ՝ սիմֆոնիկ, բալետային ու օպերային երաժշտությունից մինչեւ հանրամատչելի կինեմատոգրաֆիական երաժշտության սիմֆոնիկ փոխադրումներ եւ դասական գործերի ջազային մեկնաբանություններ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ Է ԺԱՄԱՆՈՒՄ ԱԼԵՔՍԵՅ ԼՅՈՒԲԻՄՈՎԸ

Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի հրավերով՝ Հայաստան է ժամանում աշխարհահռչակ դաշնակահար Ալեքսեյ Լյուբիմովը: Լյուբիմովը հոկտեմբերի 25-ին՝ ժամը 19:00-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում հանդես կգա իր 80-ամյակին նվիրված մենահամերգով:

Ծրագրում՝ Վալենտին Սիլվեստրով, Ֆրեդերիկ Շոպեն, Հենրի Փըրսել, Ֆրանց Շուբերտ, Միխայիլ Գլինկա, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ:

Ալեքսեյ Լյուբիմովն այսօրվա առավել գունեղ եւ ինքնատիպ երաժիշտ կատարողներից է: Նա իրականացրել է ժամանակակից երաժշտության բազմաթիվ պրեմիերաներ: Հին եւ նոր երաժշտություն կատարելը չի խանգարել Ալեքսեյ Լյուբիմովին լինել դասական եւ ռոմանտիկ երկացանկի ականավոր կատարող, ինչը ցույց են տալիս նրա բազմաթիվ ձայնագրությունները: Երբ 1980-ականներին քաղաքական սահմանափակումները Ռուսաստանում հանվել են, Ալեքսեյ Լյուբիմովը դարձել է առաջին աստիճանի միջազգային դաշնակահարներից մեկը, որ համերգներով հանդես է գալիս Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում եւ Ճապոնիայում:

«...ԵՎՐԱՏԵՍԻԼ» 2026-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Եվրոպական հեռարձակողների միությունը եւ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը ուրախ են տեղեկացնել, որ 2026 թվականին «Պատանի երաժիշտների դասական Եվրատեսիլ» մրցույթը տեղի կունենա Հայաստանում: Դասական երաժշտության մրցույթը նախատեսված է 12-ից 21 տարեկան պատանիների համար:

Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանը նշում է. «Մեզ համար մեծ պատիվ է Եվրատեսիլի հենց այս ձեւաչափը՝ «Պատանի երաժիշտների դասական Եվրատեսիլը», հյուրընկալել Հայաստանում: Հանրային հեռուստաընկերությունը եւ Եվրոպական հեռարձակողների միությունը ջանք չեն խնայելու, որպեսզի 2026 թվականին Հայաստանը դառնա դասական երաժշտության կենտրոն: Սիրով կսպասենք շնորհալի պատանի երաժիշտներին մեր երկրում»:

Հայաստանն այս մրցույթում առաջին անգամ ներկայացրել է քանոնահար Նարեկ Կազազյանը 2012 թվականին: Հաջորդ մասնակցությունն ունեցել ենք 12 տարի անց՝ 2024 թվականին. Հայաստանը ներկայացրել է հոբոյահար Հայկ Հեքեքյանը: «Պատանի երաժիշտների դասական Եվրատեսիլ» մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ՝ սկսած 1982 թվականից: 2026 թվականին Հայաստանը կլինի մրցույթի հյուրընկալող երկիրը:

«Պատանի երաժիշտների դասական Եվրատեսիլը տաղանդի եւ ստեղծարարության հրաշալի հարթակ է, որը երաժշտության միջոցով միավորում է մարդկանց,- ասում է Եվրոպական հեռարձակողների միության մեդիայի տնօրեն եւ գլխավոր տնօրենի տեղակալ Ժան Ֆիլիպ դե Տենդերը: «Մենք ուրախ ենք, որ Հայաստանը 2026 թվականի հյուրընկալող երկիրն է եւ անհամբեր սպասում ենք այս հիանալի միջոցառման շրջանակում մեր համատեղ աշխատանքին»:

Միջոցառման հետ կապված այլ մանրամասները կհրապարակվեն մրցույթին ընդառաջ:

ՄԱՐԶԱԿԱՆ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆԸ ԳԻՆԵՍԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՌԵԿՈՐԴՆ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Ուժային եռամարտի աշխարհի կրկնակի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ, Սեւանի մարզադարոցի սան Վարազդատ Հակոբյանը վերջերս Գինեսի հերթական ռեկորդներն է սահմանել:

Վարազդատ Հակոբյանը Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի կայարանում 67 տոննա կշռող գնացքը միջնամատով տեղաշարժել է 2 մետր 30 սանտիմետր, իսկ 134 տոննա կշռող գնացքը աջ ձեռքով տեղաշարժել է 63 սմ: Անվանի մարզիկն իր ռեկորդները նվիրել է ՀՀ ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի հիշատակին:

ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆԸ՝ «Pavlodar Open 2024»-Ի ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂ

Հայաստանը ներկայացնող գրոսմայստեր Արամ Հակոբյանը դարձավ Pavlodar Open 2024-ի հաղթող:

Ղազախստանում կայացած Pavlodar Open 2024 մրցաշարում Արամ Հակոբյանը 10 հնարավորից հավաքելով 8 միավոր եւ չկրելով ոչ մի պարտություն՝ դարձավ մրցաշարի հաղթող: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցրին Հնդկաստանի ներկայացուցիչները:

«Pavlodar Open 2024»-ին մասնակցում է 96 շախմատիստ:

ԼԵՎՈՆ ՋՈՒԼՖԱԼԱԿՅԱՆԸ ՌԴ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

Օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, ըմբիշ Լեւոն Ջուլֆալակյանը դարձել է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի:

Այս մասին փաստում է ՌԴ նախագահի ստորագրած հրամանագիրը:

Լեւոն Ջուլֆալակյանը Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի երկարամյա մարզիչ էր: Նա այդ պաշտոնից հեռացավ 2019 թվականին:

Պրոֆեսիոնալ կարիերայի ընթացքում Լեւոն Ջուլֆալակյանը դարձել է 1988 թվականի Սեուլի Օլիմպիական խաղերի չեմպիոն, 1986 թվականին նվաճել է Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոնի կոչումը:

ՀԱՂԹԵՑ ՌՈՒՍ ՄԱՐԶԻԿԻՆ

Երեկ Ալբանիայի Տիրանա քաղաքում մեկնարկել է ըմբշամարտի Մ23 տարեկանների Աշխարհի առաջնությունը: Հայկ Խլոյանը (97 կգ) կիսաեզրափակչում հաղթեց ռուսաստանցի մարզիկին եւ դուրս եկավ եզրափակիչ:

Խլոյանը ոսկու համար կպայքարի Բելառուսի ներկայացուցիչ Աբուբաքար Խասլանխանովի հետ:

● Հոկտեմբերի 27-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «5+1 պատմություն սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի օպերատիվ կերպով ստանամ ծանուցումները, տեղեկանամ կիրառված արգելանքների, վարույթների կարճման մասին:

Հրաչյա Մանաթյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին իր վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներին, կիրառված բոլոր արգելանքներին կարող է ծանոթանալ՝ գրանցվելով կայքի «Անձնական գրասենյակ» հարթակում՝ մուտքագրելով համապատասխան տվյալները:

Հարթակի միջոցով պարտապան ֆիզիկական անձինք կարող են տեսնել կատարողական վարույթներին առնչվող թարմացումները, տեղեկություն ստանալ ծառայությունում իրենց վերաբերյալ հարուցված կատարողական վարույթների, կիրառված բոլոր արգելանքների, կատարողական վարույթի ընթացքի, կարճման վերաբերյալ, դիտել եւ ներբեռնել 2021 թվականի հունվարի 1-ից հետո հարուցված կատարողական վարույթների շրջանակում կայացված որոշումները, ծանոթանալ կատարողական վարույթի հարուցման հիմք հանդիսացած վարչական ակտերին եւ վարչական մարմնի կողմից այդ ակտերի մասին հասցեատիրոջն իրազեկելուն:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարթակի միջոցով պարտապան ֆիզիկական անձինք կարող են տեսնել նաեւ ակտը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցներին, կատարել վճարումներ միաժամանակ մի քանի կատարողական վարույթով, հետեւել ապաարգելադրման գործընթացին:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն գիտական գործունեության համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

Նարեկ Մնացականյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կազմակերպության ղեկավարը ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով գրավոր դիմում է ՀՀ գիտության կոմիտե՝ ներկայացնելով գիտական միջոցառման կազմակերպչի իրավերը կամ զեկույցն ընդունելու մասին ծանուցումը, գիտական գործունեության համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտը եւ գործունեվող գիտաշխատողի գիտական արդյունավետության բնութագիրը (վերջին 3 տարիների ընթացքում հայտատուի գիտական հրապարակումների (մինչեւ տասը) եւ գիտական միջոցառումներում հրավիրված կամ բանավոր զեկույցների (մինչեւ հինգ) ցանկերը):

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ընդունելի է նաեւ կոմիտեի մրցույթների հայտերի եւ հաշվետվությունների ընդունման առցանց համակարգում (https://grants.scs.am) գրանցված գործունեվող գիտաշխատողի անհատական (տասներկու նիշանոց) կոդը ներկայացնելը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Առաջին տիկին Աննա Հակոբյանը երեկ հանդիպել է հասարակական կյանքում ակտիվություն ցուցաբերող երիտասարդների հետ եւ քննարկել կրթության հարցը, ինչպես ինքն է գրել՝ «կրթությունը մոդայիկ դարձնելու համար»:

Ստացվում է՝ առաջին տիկնոջ ենթատեքստային քարոզում կրթությունը ոչ թե ողջ կյանքի համար է, այլ պարզապես մոդայիկ բնույթ է կրում. երեւի դրա համար է նա Մովսես խորենացու «Ողբը» այդ օրվա խնջույքի սեղանի ափսեի վրա դրված «կարդում»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*